Քեռմյուրճյան գերդաստանի տոհմածառը, նոր անուններ հայտնաբերել և սերնդակցությունը ճշտել։

Ֆերիդյուղի լատինաց գերեզմանատան տապանագրերն այլի անցկացնելիս նա հայտնաբերել և նույն գրքում հրատարակել է Երեմիայի նահապետ եղբոր՝ Տեր Կոմիտաս քահանայի Վիկոր (Վիկտոր) և Զամպետա թոռնուհիների 1740 թ. տապանագիրը։

Լավին կարելի է պատկերացնել հայագիտական այն նորույթների գումարը, որ կարող է բերել Կ. Գոլսի հայոց հին ու նոր հանգատանների տապանագրերի համահավաք հրատարակությունը, իսկ հարգարժան բանասերը վաղուց արդեն ձեռնամուխ է եղել այդ գործի կազմությանը։ Հուսանք, որ մեր սերունդը կարժանանա այդ հրատարակությունը տեսնելու։

Պատմ. գիտ. դոկտոր Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ. Վանի թագավորության պետական կրոնը, *Հայաստանի ԳԱ հրատարակչություն, Երևան, 1990, 158 էջ և 31 էջ աղյուսակներ։*

Հին քաղաքակրթությունների կազմավորման ու զարգացման իրական ընթացքը դժվար է պատկերացնել առանց դրանք կերտող ժողովրդի կամ ժողովուրդների հոգևոր կյանքի բոլոր դրսևորումների և աշխարհայեցողության մի հավաքական ամբողջություն հանդիսացող կրոնի համակողմանի ուսումնասիրման։ Հազարամյակների ընթացքում հղկվելով և հարստանալով հարակից էթնոմշակութային հանրույթների կրոնական հավատալիքների հետ ունեցած շփումներով և տվյալ էթնոսի սոցիալ-քաղաքական զարգացման որոշակի մակարդակում հասնելով պետական պաշտոնական կրոնի աստիճանի, այն վերածվում է առասպելական շքեղաշուք պսակված մի յուրատեսակ խճանկարի, որի գիտական վերծանությունը անգնահատելի սկզբնաղբյուր է էթնիկական ու քաղաքական պատմության մասնագետների համար։

Հենց այս տեսանկյունից պետք է գնահատել գրախոսվող աշխատությունը, որը հեղինակի՝ Ս. Գ. Հմայակյանի բազմամյա ուսումնասիրությունների հանրագումարն է, ավելի ճիշտ՝ «առաջին արգելապատնեշի» հաղթահարումը, որը կարող է հիմքը լինել այս բնույթի հետագա և այլ աշխատությունների համար։ Որքան էլ տարօրինակ հնչի, ինչուամենայնիվ փաստ է, որ մինչ այս, համեմատաբար հարուստ ուրարտագիտական գրականության մեջ չկային աշխատություններ, որոնք Ուրարտուի (Վանի թագավորության) կրոնը ներկայացնեին քիչ թե շատ ամբողջական տեսքով. և այս աշխատությունը, բնականաբար, լրացնում է այդ բացը։

«Վանի թագավորության պետական կրոնը» աշխատությունը կազմված է նախաբանից, հինգ գլուխներից, վերջաբանից, աղյուսակների, համառոտագրությունների, աշխարհագրական անունների, անձնանունների, դիցանունների ցանկերից և ոնի ընդարձակ, ռուսերեն ամփոփում։

Նախաբանում տրված է Վանի թագավորության հակիրճ քաղաքական պատմությունը և պատճառաբանված է կատարված ուսումնասիրության նպատակահարմարությունը։

Աշխատության առաջին գլուխը նվիրված է Վանի թագավորության կրոնի ուսումնասիրության պատմությանն ու սկզբնաղբյուրների վերլուծությանը։ Հիմնականում առանձնացված են հինգ տիպի սկզբնաղբյուրներ՝ սեպագրական վիմագիր տվյալներ (գլխավորապես ուրարտական և ասուրա-բաբելական), հնագիտական նյութ, մատենագիտական, ազգագրական ու բանահյուսական տեղեկություններ։ Գլուխը սկսվում է Մհերի դռան՝ Ուրարտուի հիմնական պաշտամունքային կառույցի և արձանագրության բազմիցս, տարբեր հեղինակների կողմից կատարված թարգմանությունների համադրությամբ ու ճշգրտմամբ. ծանր, և հնագիտական կրթություն ստացած մասնագետի համար անսովոր թվացող մի աշխատանք, որը, կարծում ենք, պակվել է հաշողությամբ։ Ասենք, իր իսկ կատարած ճշգրտումների հիման վրա է, որ հեղինակին հաշողվել է հինգերորդ գլխում վերլուծել մինչ այս չպարզաբանված և անհայտ ուրարտական երկրագործական-եղանակային ծեսերը, որոնք շատ մանրամասներով համընկնում են համանման հայկականների հետ. մանավանդ նրանք, որոնք առնչվել են խաղողագործության հետ։ Պատկերացում տալու համար կատարված աշխատանքի մանրազննության մասին, նշենք, որ ծանոթագրված է այս բավականին խոշոր տեքստի գրեթե յուրաքանչյուր երրորդ բառը։ Այս գլխում պա-

դիաս հանգամանորեն վերլուծված են նաև մյուս գրավոր աղբյուրներն ու արդեն հիշատակված սկզբնաղբյուրներից կարևորագույնները։

Ս. Հմայակյանը այստեղ հանգամանորեն ներկայացնում և վերլուծում է նաև հարցի մասին եղած գրեթե ամբողջ դրականությունը, առանձնահատուկ ուշադրություն հրավիրելով Գ. Ա. Ղափանցյանի, Գ. Ա. Մելիքիշվիլու, Ն. Գ. Ադոնցի, Բ. Բ. Պիոտրովսկու, Ն. Վ. Հարությունյանի, Գ. Բ. Ջահուկյանի և Հ. Ա. Մարտիրոսյանի աշխատությունների վրա։ Գրքի շարադրանքի ընթացքում նա բազմիցս անդրադարձել է նաև Մ. Ռիմշնայդերի և Ֆ. Քյոնիգի՝ Ուրարտուի կրոնին նվիրված հոդվածներին, որոնց, թերևս, նույնպես կարելի էր անդրադառնալ առաջին գլխում։ Այստեղ, հիմք ունենալով արդեն կատարված ուսումնասիրությունները Ս. Գ. Հմայակյանը տալիս է նաև Ուրարտական դիցարանի աստվածություններից ուրի հակիրճ բնութագիրը. ընդ որում, հիմնվելով տարիներս Սյունիքում հայտնաբերված և դեռևս չհրատարակված մի արձանագրության տվյալների վրա, վերջնականապես ապացուցում է այն ժամանակներից արդեն ընկալված Սարդի—Իշթար ֆունկցիոնալ ընդհանրությունը։

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է դիցարանի կառուցվածքին՝ ըստ Մհերի դռան արձանագրության։ Շարադրանքի հիմք են հանմանականորեն, անվանված են «սրբություններ»։ Վերջիններս, ըստ Հմայակյանի, քանանին են և ստորաբաժանված են ինը խմբերի։ Խստիվ կանոնավորված են եղել և աստվածությունները, որոնցից յուրաքանչյուրը դիցարանում ունեցել է միայն իրեն վերապահված տեղը և զոհերի՝ հիմնականում կայուն քանակը. սրբություններն էլ բաժանված են խմբերի (ըստ Հմայակյանի տերմինաբանության), կառուցվածք, որը արտացոլված է հեղինակի կազմած ստորև բերված աղյուսակում.

Ուրարտական դիցարանի իր ընկալած կառուցվածքի այս ձևը հեղինակը գիտական հանրության ուշադրությանն էր արժանացրել դեռևս 1975 և 1982 թվականներին հրատարակած հոդվածներում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 158—164, և 1981, № 3, էջ 205—210) և ընդունվում էր որոշ վերապահությամբ. սակայն, գրքում բերված հետևյալ դիտողությունը (տե՛ս էջ 128, ծան. 32) կարծես առավել համոզեցուցիչ է դարձնում հեղինակի եզրահանգումը. «Հնարավոր է, որ ուրարտական դիցարանի կառուցվածքում իրենց արտահայտությունն են գտել նաև տարվա մասին գոյություն ունեցած պատկերացումները։ ...Երրորդ խմբում ընդգրկված աստվածությունների թիվը՝ 52, համապատասխանում է օրացուցային տարվա ունեցած շաբաթների թվին (52 շաբաթ+1 օր)։ Չորրորդ խմբում ընդգրկված աստվածությունների թիվը՝ 12, համապատասխանում է արեգակնային տարվա ամիսների թվին՝ 12։ Առաջին խմբում ընդգրկված աստվածությունների թիվը՝ 6 (+1), համապատասխանում է հին աշխարհում երբեմն կիրառվող շաբաթվա օրերի թվին [աստվածների առաջին խմբում ընդգրկված են 6 աստվածներ, սակայն Խալդիի անունն այստեղ անվանապես հիշատակված է երկու անգամ (УКН, № 27, տող 5—6, 35—36). այսինքն այս խմբում նշված են երեք դիցանուններ, սակայն շեշտված է 4 թիվը, որին եթե ավելացվի առաջին խմբի դիցուհիների թիվը՝ 3, կստացվի 7]։ Արական և իգական աստվածություն-

Աստվածությունների խումբը	Աստվածների քանակը	Աստվածուհիների քանակը	Ընդամենը
I	3(+1)	3	6(+1)
II	6	6	12
III	26	26	52
Ընդամենը	35	35	70

դիտարկել Գ. Ա. Ղափանցյանի և Ֆ. Քյոնիգի կատարած աշխատանքները ու Գ. Ա. Մելիքիշվիլու դիտարկումները, սակայն ստացված արդյունքները այլ են։ Ըստ Ս. Գ. Հմայակյանի, ուրարտական դիցարանը խստիվ կանոնավորված է եղել և մշակված երկու մեծ բարեփոխիչ արքաների՝ Իշպուինիի և Մինուայի համատեղ գահակալության տարիներին ու նախաձեռնությամբ։ Ընդ որում դիցարանում առանձնացված են եղել երկու, միմյանցից տարբեր, պաշտամունքի արժանի երևույթներ՝ բուն աստվածություններն ու այդ աստվածությունների պաշտամունքների մասը կազմող երևույթները (տարբեր երևակայական կամ իրական ատրիբուտներ, պաշտամունքային կենտրոններ և այլն), որոնք աշխատանքում, զուտ պայ-

ների թիվը, առանձին-առանձին վերցված՝ 35, համապատասխանում է եգիպտական, զրադաշտական, հին հայկական տարվա ամսվա օրերի թվին՝ 30, ավելացված տարվա «ավելեցաց» 5 օրերը։

Մ. Գ. Հմայակյանի այս եզրահանգումն էլ է առաջին հայացքից անհավանական թվում. սակայն ԼԲԼ ընդունում ենք, որ Ուրարտուի պիցաբանը մի կանոնի է բերված, ապա պիտի ընդունենք նաև, որ այդ կանոնավորումը կատարված է ինչ-որ սկզբունքի կամ մոդելի հիման վրա, մոդել, որը կարող էր հենց իրենց իսկ օգտագործած օրացույցը լինել. ինչել, սա հարց է, որի ավելի ստույգ պատասխանը թողնում ենք օրացույցով զբաղվող մասնագետներին։

Աշխատության հաջորդ, երրորդ գլուխը նվիրված է դիցարանի աստվածությունների ուսնեցած ֆունկցիաների, նրանց պաշտամունքային կենտրոնների ու պատկերագրության քննությանը։ Անհամաստ է այստեղ հանգամանորեն շարադրել այդ գլուխը գրքի առկայության պայմաններում։ Ասենք միայն, որ այնտեղ բերված ու մշակված նյութը մեծ հեռանկարներ է բացում նաև հելլենիստական Հայաստանի կրոնի ուսումնասիրության բնագավառում։ Այդ դիտողություններից առավել ուշագրավ են Խալդի-Արսբանի (Բադամաշիու) և Միթրա-Վարունա (Ահուրամազդա), Կուեռա-Կուառ-Վիշապաղուններ, Կիբելե-Խուբա և Աստղիկ-Անահիտ, Թեշուբ և Վահագն համադրությունները, որոնք, հուսով եմ, ժամանակի ընթացքում կըհաջողվի փաստարկել էլ ավելի հարուստ նյութերով։ Ընդ որում, Ս. Գ. Հմայակյանի՝ այս կարգի դիտողություններից մեկն արդեն ապացուցվեց նման ձևով. այսպես, գրքի հենց այս գլխում, անդրադառնալով Բիայնելեի լուսնաստծու անվան խնդրին, նա ապացուցում է, որ ճիշտ է ժամանակին առաջ քաշված և այնուհետև մերժված այն տեսակետը, թե լուսնի աստվածությունը Ուրարտուում կրել է ոչ թե Շելարդի, այլ Մելարդի անունը, որը վկայված է նաև Երեմիա Միդրեցու բառարանում Մեղարդ ձևով և «լուսին» նշանակությամբ։ Այժմ ասսուրական տեքստերի նոր մեկնաբանությունների ընթացքում պարզվել է, որ Ուրարտուն ունեցել է մինչ այժմ անհայտ մեկ արքա ևս, Մելարդուա անվամբ։ Այս անունն անկասկած կազմված է երկու դիցանուններից՝ Մելարդի և Ուաս։ Ընդ որում սա ուրարտերենում հանդիպող առաջին անձնանունն է, կազմված դիցանուն+դիցանուն սկզբունքով. հարկ է նշել, որ այս կառուցվածքի անձնանուններն անհամեմատ ավելի հաճախ են հանդիպում ասսուրա-բաբելական և խեթական արձանագրություններում։

Ավելացնենք նաև, որ Ս. Գ. Հմայակյանին հաջողվել է նոր՝ հնագիտական նյութերով ապացուցել, որ սեպագրագետների ու լեզվաբանների տարիներ առաջ կատարած այն զիտողությունը, թե ուրարտական Արծիրիդիի աստվածությունը բացատրվում է հայերեն, նշանակում է Արծիվ-աստված ու իր արտացոլումն է գտել Խորենացու նկարագրած ավանդություններից մեկում, համապատասխանում է իրականությանը (տե՛ս էջ 58—60, 120)։

Գրախոսվող աշխատանքի չորրորդ գլխում հեղինակը անդրադարձել է երկրի պաշտամունքային շինությունների ու քրմության հետ առնչվող հարցերին։ Հիմք ունենալով հին ու նոր հնագիտական ու աղբյուրագիտական տվյալները, նա առանձնացնում է ինը կարգի պաշտամունքային կառույցներ, որոնք տարբերվում էին միմյանցից ինչպես իրենց ճարտարապետական հորինվածքներով, այնպես էլ ֆունկցիոնալ նշանակությամբ. ընդ որում, մատնանշում է նաև, որ տարբեր պաշտամունքային կառույցների համակցությամբ ստեղծված համալիրներն Ուրարտուում անվանվում էին «շեշտելե» («գարպասներ»), պաշտամունքային շինությունների շարքում սակրալ նշանակությամբ կարևորագույնի անունով։

Վանի թագավորության պաշտամունքային գլխավոր կենտրոնը, ըստ Ս. Գ. Հմայակյանի, եղել է ոչ թե Մուծածիրը, ինչպես ենթադրվում էր, այլ Տուշպան, իսկ գլխավոր քուրմը՝ երկրի արքան, հինարևելյան շատ այլ պետությունների նման։

Աշխատության վերջին՝ հինգերորդ գլուխը նվիրված է երկրի ծեսերին։ Հիմք ունենալով հնագիտական և աղբյուրագիտական հայտնի տվյալները, հեղինակը վերականգնել է Ուրարտուի թագադրության, ռազմական, երկրագործական-եղանակային, թաղման ծեսերը։ Վերլուծելով թաղման ծեսի առանձնահատկությունները, նա մատնանշում է, որ կանոնավորված ե քրմության կողմից վերահսկվող ծիսական համակարգերի կողքին շարունակում էին գոյատևել նաև առանձին ծիսական արարողություններ, որոնք մերժվում էին պետական կրոնը սպասարկող քրմության կողմից. մասնավորապես, այդպիսին էր և մարդկային զոհաբերությունների սովորույթը։ Ս. Գ. Հմայակյանի կարծիքով, հենց երկրի էթնիկական քարտեզի հարստությամբ էր պայմանավորված թաղման տարբեր ծեսերի այն առատությունը, որ դիտվում է երկրում. հեղինակը հաշվում է երեք հիմնական ծես՝ դիաթաղում, դիակիզում, դիա-

մասնատում 16 տարբերակներով։ Համայակյանը առանձնահատուկ ուշադրության է արժանացրել այն դամբարանների քննությունը, որտեղ նկատված են նույն գերեզմանում տարբեր ծեսերով կատարված թաղումներ։ Նրա կարծիքով սրանք տարբեր էթնիկական ծագում ունեցող ամուսինների գերեզմաններ են, որտեղ ամուսիններից յուրաքանչյուրը իր հանգիստն է գտել սեփական ժողովրդին կամ ցեղին հատուկ ծիսակարգով։ Այսինքն, այս գարաշրջանում լեռնաշխարհի ժողովուրդների միաձուլման առանձնապես ինտենսիվ կերպով ընթացող փաստը վկայված է նաև այս ձևով։

Այսպիսով, Ս. Համայակյանի մենագրությունը ամբողջական պատկերացում է տալիս Ուրարտուի պատմության՝ առ այսօր միայն խիստ ընդհանուր գծերով ուսումնասիրված կրոնապաշտամունքային կյանքի մասին։ Աշխատության գրեթե բոլոր բաժիններում հիմնականում համոզիչ կամ հավանականության մեծ տոկոսով համադրվում է բուն ուրարտական և հայկական նյութը, որը հեղինակին թույլ է տալիս գրքի վերջաբանում ասելու հետևյալը. «Այն (հայկական մշակույթի ազդեցությունը—Ա. Ք.) նշանակալից էր հատկապես Ուրարտուի պետական կրոնի ու լեզվի, հետևաբար և մտածելակերպի վրա։ Հանգամանք, որը խորհել է տալիս, որ ամենաուշը մ. թ. ա. IX դարում լեռնաշխարհում արդեն գոյություն ուներ հայ ժողովուրդ, բարձր զարգացած մշակույթով ու քաղաքական կյանքով ...» (էջ 85)։

Խոսելով մենագրության առանձնահատկությունների մասին, չի կարելի չնշել հեղինակի յուրօրինակ գրելաոճը։ Ս. Համայակյանը հնարավորության սահմաններում աշխատում է խուսափել անվերապահ եզրակացություններից, նույնիսկ եթե նյութը այլընտրանքի տեղիք չի տալիս։ Նայրաստիճան զգուշավոր մոտեցումը, անշուշտ նկատի ունենալով ուսումնասիրության առարկայի բարդությունը, էլ ավելի է արժեքավորում այն։ Մեզանում այնքան էլ հազվադեպ չեն այնպիսի ուսումնասիրությունները, որոնք զրկվում են արժանահավատության իրավունքից, երբ հետազոտողը, ձգտելով մեկ հարվածով «պարզել» որևէ հարց, ընկնում է «ստուգարանությունների ճահիճը»։ Համայակյանի մոտ լեզվահամեմատական հատվածները հեռու են սուբյեկտիվությունից։ Սովորաբար հեղինակը սահմանափակվում է գոյություն ունեցած կարծիքները հիշատակելով և միայն առանձին դեպքերում է հենվում ժամանակի քննությունը բռնած տեսակետների վրա։

Ավարտելով այս գրախոսությունը և օգտվելով ընձեռնված առիթից անհրաժեշտ եմ գտնում նշել մի նկատառում, որը վերաբերում է Բիայնիլի-Ուրարտու-Վանի կամ Այրարատյան թագավորություն անվանված պետության և, հետևաբար, մ. թ. ա. IX—VII դդ. ընթացքում Հայկական լեռնաշխարհի տարածքի մի նշանակալից մասում գոյատևած այդ խոշոր քաղաքակրթության պատմությանը նվիրվելիք ապագա ուսումնասիրություններին։ Ուրարտական քաղաքակրթությունը, դատելով նախորդ շրջանի մասնագիտական հարուստ գրականությունից և գրախոսվող աշխատությունից ստացված տպավորությունից, հինարևելյան քաղաքակրթությունների շարքում ունի իր ուրույն, մեկ ուրիշին չկրկնող տեղը և, բնականաբար, գոյության իրավունքը։ Եվ ոչ մի նկատառումով չի կարելի անտեսել այն։ Ուրարտա-հնդեվրոպական և, մասնավորապես, ուրարտա-հայկական սերտ առնչությունները (լեզվական, հոգևոր, մշակութային) վկայում են ոչ թե «ուրարտականի» չգոյության, այլ, ընդհակառակը, գոյության մասին։ Ուրարտները, հավանաբար, խուռի-ուրարտական խոշոր էթնոսի այն հատվածն էին, որոնց մ. թ. ա. II հազարամյակի վերջին հաշողվեց, ավելի քան մյուսներին, ներթափանցել լեռնաշխարհի խորքը, հիմնավորվել և մի որոշ ժամանակաշրջանի ընթացքում այստեղ իր քաղաքական ազդեցությունը տարածել։ Այս ժամանակահատվածի ընթացքում էլ պիտի ձևավորվեին այն բոլոր ուրարտա-հայկական ընդհանրությունները, որոնք քայլ առ քայլ ի հայտ են գալիս և որոնք երբեմն, դրժբախտաբար, ոմանց կողմից որպես հիմք են դիտվում բուն ուրարտականը ժխտելու համար։

Ա. Վ. ՔԱՍՅԱՆ